



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ**

23 դեկտեմբերի 2011 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/4

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ԴՆ ՆՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍԻԻ

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 41 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալները, Երևանի քաղաքապետի խորհրդականները, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, Երևանի վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ՁԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը առաջարկեց, լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտությունից ելնելով, Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի չորրորդ նիստի օրակարգի նախագծից հանել «Երևան քաղաքի Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի բնակարանն անհատույց օտարելու և Երևանի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 13-ի հ.299-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» և ««Սրտաբանություն» գիտահետազոտական ինստիտուտը ՄՍՀՄ բժշկական ակադեմիայի իսկական անդամ, ՀՄՍՀ ակադեմիայի իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ Լևոն Հովհաննիսյանի անվամբ անվանակոչելու մասին» ավագանու իրավական ակտերի նախագծերը:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վճարման, կանոնադրական կապիտալն ավելացնելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
5. Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին լիազորություններ վերապահելու մասին:
6. Աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը հաստատելու մասին:
7. Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N6356-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

8. Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:
9. Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:
10. Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:
11. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
12. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
13. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
14. Գույք ընդունելու մասին:
15. ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր Սարգիս Սալտիկովի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
16. ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամսոն Գասպարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
17. Հասարակական-քաղաքական գործիչ, ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան, գնդապետ Պերճ Բոշնալյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
18. ՀԽՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչ Գարեգին Լևոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
19. Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Նազուշ Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
20. Բժիշկ-գիտնական, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գերասիմ Աղաջանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
21. Լեմվել Վալեսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
22. ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Պավել Լիսիցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
23. Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր Լուսինե Զաքարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
24. Վահրամ Գայֆեճյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
25. Գևորգ Քոչարի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Օրակարգի հաստատման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - Հաստատել Երևանի ավագանու վեցերորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 41
 դեմ - 0
 ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. **ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ- 1. Հաստատել՝

- 1) Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեն՝
 - ա) եկամուտների գծով՝ 63,716,652.5 հազ. դրամ,
 - բ) ծախսերի գծով՝ 63,766,652.5 հազ. դրամ,
 - գ) դեֆիցիտը (պակասուրդը) 50,000.0 հազ. դրամ.

2) Երևանի 2012 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտներն՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն հավելված N 1-ի.

3) Երևանի 2012 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումներն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հավելված N 2-ի.

4) Երևանի 2012 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված N 3-ի.

5) Երևանի 2012 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելված N4-ի.

6) Երևանի 2012 թվականի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված N 5-ի.

7) Երևանի 2012 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված N 6-ի.

8) սույն որոշման N 6 հավելվածով հաստատված հատկացումների վերծանումը՝ ըստ Երևանի վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների)՝ համաձայն հավելված N 7-ի:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշմամբ հաստատված բյուջե-տային ծախսերի տնտեսագիտական դասակարգման դրամաշնորհների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը՝ ըստ ստացող կազմակերպությունների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. ԼՄԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N169-Ն որոշմամբ հաստատված.

1) Եկամուտների գումարն ավելացնել 106,906.9 հազար դրամով,

2) ծախսերի գումարը ավելացնել 106,906.9 հազար դրամով:

1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N169-Ն որոշմամբ հաստատված NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-5 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. **ԼՄԵՑԻՆ** – «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վճարման, կանոնադրակ ան կապիտալն ավելացնելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված.

1) Ծախսերի գումարն նվազեցնել 25,000.0 հազար դրամով,

2) դեֆիցիտի (պակասորդի) գումարը նվազեցնել 25,000.0 հազար դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N169-Ն որոշմամբ հաստատված NN 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-6 հավելվածների:

3. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության տեղաբաշխված 10000 դրամ անվանական արժեքով 100 հատ հասարակ բաժնետոմսերի՝ դիմաց 1,000.0 հազար դրամ վճարումը կատարել Երևանի քաղաքի 2011 թվականի բյուջեով, սույն որոշմամբ նախատեսված հատկացումների հաշվին:

4. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը լրացուցիչ 2400 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով ավելացնել 24,000.0 հազար դրամով՝ այն սահմանելով 25,000.0 հազար դրամ, որից հետո հասարակ (սովորական) բաժնետոմսերի ընդհանուր թիվը կդառնա 2500 հատ, յուրաքանչյուրը՝ 10000 դրամ անվանական արժեքով՝ վճարումը իրականացնելով Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեով, սույն որոշմամբ նախատեսված հատկացումների հաշվին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

4. **ԼՍԵՑԻՆ**–Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին լիազորություններ վերապահելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերում աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու, ինչպես նաև այդ վճարը համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ գանձելու (մուտքագրելու) լիազորությունները վերապահել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5. **ԼՍԵՑԻՆ**– Աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

6. **ԼՍԵՑԻՆ** – Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N6356-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ.Նավասարդյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011թ. դեկտեմբերի 8-ի «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.6356-Ա որոշմանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ –41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

7. ԼՍԵՑԻՆ – Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների գանձման և հաշվառման վարչության պետի ժ/պ Մ.Մկրտչյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին սեփականության իրավունքով պատկանող Դրոյի փողոց հհ. 22/5 և 30 հասցեներում գտնվող շինության նկատմամբ սահմանել գույքահարկի արտոնություն՝ 1.025.654 (մեկ միլիոն քսանհինգ հազար վեց հարյուր հիսունչորս) դրամի չափով, որից ապառք՝ 549.500 (հինգ հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր) դրամ, տույժ՝ 476.154 (չորս հարյուր յոթանասունվեց հազար մեկ հարյուր հիսունչորս) դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ –41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

8. ԼՍԵՑԻՆ – Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների գանձման և հաշվառման վարչության պետի ժ/պ Մ. Մկրտչյանը:

ՈՐՈՇՎԵՑ – «ՀԱՅԱՍՏԱՆ» Մարզական Միություն հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող Ագաթանգեղոսի 6 հասցում գտնվող շինության նկատմամբ սահմանել գույքահարկի արտոնություն՝ մինչև 2008 թվականը գոյացած տույժերի նկատմամբ 2.625.252 (երկու միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր հիսուներկու) դրամի չափով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ –41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

9. ԼՍԵՑԻՆ – Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների գանձման և հաշվառման վարչության պետի ժ/պ Մ.Մկրտչյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող գույքային միավորների գույքահարկի գծով հարկային պարտավորությունների մասով (մինչև 2007-թ. ներառյալ ընկած ժամանակահատվածը) տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 98.920,5 հազար դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

10. ԼՍԵՑԻՆ– Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Ֆուչիկի փողոցի 1-ին նրբանցքի հ.3 շենքի հ.22՝ 54.1քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 09.04.2010թ. հ.2690589 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ալվարդ Քամայանին և Ռոման Սևյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

11. ԼՍԵՑԻՆ– Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Կիկյան փողոցի հ.8/4 շենքի հ.29՝ 13.8քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 22.09.2011թ. հ.2719088 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սվետլանա Քաչարյանին, Լիլիյա Աղաբեկյանին և Սոնա Աղաբեկյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

13.ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Թույլատրել Երևանի քաղաքապետին Մեքաստիա փողոցի հ.18 շենքի հ.18՝ 150.6քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 08.11.2011թ. հ.2711887 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Աշոտ Հակոբյանին և Լյուդմիլա Միմոնյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

14. ԼՍԵՑԻՆ – Գույք ընդունելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ա.Մկրտչյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «Երևան» հիմնադրամ բարեգործական կազմակերպությունից որպես նվիրատվություն ընդունել գույք՝ համաձայն հ.1 հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

15. ԼՍԵՑԻՆ – ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր Սարգիս Սալտիկովի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ.Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր Սարգիս Սալտիկովի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տիգրան Մեծ պողոտա-27 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

16. ԼՍԵՑԻՆ – ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամսոն Գասպարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ.Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամսոն Գասպարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մ. Մաշտոցի պողոտայի հ.39/12 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

17. ԼՍԵՑԻՆ – Հասարակական-քաղաքական գործիչ, ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան, գնդապետ Պերճ Բոշնաղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ.Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն հասարակական-քաղաքական գործիչ, ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան, գնդապետ Պերճ Բոշնաղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Չարենցի փողոցի հ.4 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

18. ԼՍԵՑԻՆ– ՀԽՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչ Գարեգին Լևոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ.Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ- Տալ համաձայնություն ՀԽՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչ Գարեգին Լևոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բայրոնի փողոցի հ.12 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

19. ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս Նազուշ Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ.Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ- Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Նազուշ Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մ.Մաշտոցի պողոտա-9 հասցեում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

20. ԼՍԵՑԻՆ–Բժիշկ-գիտնական, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գերասիմ Աղաջանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ.Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն բժիշկ-գիտնական, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գերասիմ Աղաջանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ալ. Թամանյան-1 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

21. ԼՍԵՑԻՆ - Լեմվել Վալեսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, Ռուսաստանի Դաշնության կրթության ակադեմիայի ակադեմիկոս Լեմվել Վալեսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոց-3 շենք հասցեում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

22. ԼՍԵՑԻՆ – ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Պավել Լիսիցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Պավել Լիսիցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մ.Մաշտոցի պողոտա-48 հասցեում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

23. ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր Լուսինե Զաքարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր Լուսինե Զաքարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ե. Կոռբացի-42 հասցեում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

24. ԼՍԵՑԻՆ – Վահրամ Գայֆեճյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն հայ կերպարվեստի նշանավոր ներկայացուցիչ, նկարիչ-մանկավարժ Վահրամ Գայֆեճյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մ. Մաշտոցի պող.-21 հասցեում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

26. **ԼՍԵՑԻՆ** – Գևորգ Քոչարի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՋԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն Հայաստանի վաստակավոր ճարտարապետ, արվեստի վաստակավոր գործիչ Գևորգ Քոչարի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Չարենցի-4 հասցեում տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Երևանի քաղաքապետ Ս. Մարգարյանը տեղեկացրեց, որ համաձայն Երևանի ավագանու կանոնակարգի՝ Երևանի ավագանու 7-րդ նստաշրջանի առաջին նիստը կգումարվի 2012 թվականի փետրվարի 14-ին ժամը 11.00-ին:

Քաղաքապետ Ս. Մարգարյանը շնորհավորեց բոլորի գալիք Ամանորը, շնորհակալություն հայտնեց ավագանու անդամներին համատեղ արդյունավետ աշխատանքի համար և հաջողություն մաղթեց բոլորին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ